ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/4188/02/24 ք. Երևան
3 Հունիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «ՀԱԶԱՐԱՇԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անունից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝ ՀՀ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանի 25.04.2024թ.-ի թիվ 501 որոշումը՝ Հազարաշեն ՍՊԸ-ին երկու տարի ժամկետով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին՝

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի անունից 27.05.2024թ.-ին հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի՝ ՀՀ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանի 25.04.2024թ.-ի թիվ 501 որոշումը՝ Հազարաշեն ՍՊԸ-ին երկու տարի ժամկետով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը կից փաստաթղթերով դատավոր Էդ. Ամալյանի աշխատակազմին «cabinet.court.am» էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 29.05.2024 թվականին:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Դատավոր՝ Էդուարդ Ամալյան

Digitally signed by AMALYAN EDUARD 1203760221
Date: 2024.06.19 15:10:39 AMST

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am